

*Նվիրված է ԲՄ 75-ամյակին*

*Հարցազրույց «ՀՀ ԳԱԱ Վ. Համբարձումյանի անվ. Բյուրականի աստղադիտարանի (ԲԱ) գիտահետազոտական բաժինների վարիչների հետ հարցազրույցներ» շարքից*

2021թ. ապրիլի 27

Հարցազրույց ՀՀ ԳԱԱ Վ. Համբարձումյանի անվ. Բյուրականի աստղադիտարանի (ԲԱ) «Ակտիվ գալակտիկաներ» գիտահետազոտական բաժնի վարիչ, ֆ.մ.գ. թեկնածու, ավագ գիտաշխատող Ռուբեն Անդրեասյանի հետ



*Ռուբեն Անդրեասյան*

*Հարգելի պրն Անդրեասյան,*

1. Խնդրում եմ նկարագրել Ձեր դեկավարած գիտահետազոտական բաժինը՝ քանի՞ գիտաշխատողից է այն կազմված (մի փոքր ներկայացրեք նրանց), և որո՞նք են ուսումնասիրության հիմնական ուղղությունը, թեմաները, առաջադրված խնդիրները:

Ակտիվ գալակտիկաներ բաժինը բաղկացած է 4 աշխատակցից՝

Ռուբեն Անդրեասյան - ֆ.մ.գ. թեկնածու, բաժնի վարիչ, ուսումնասիրության հիմնական ուղղությունը՝ Մեր Գալակտիկայի և այլ գալակտիկաների մագնիսական դաշտի ուսումնասիրություն, ռադիոգալակտիկաների ֆիզիկական և ձևաբանական ուսումնասիրություն՝ շեշտը դնելով ծնող գալակտիկայի դիպոլային մագնիսական դաշտի առկայության վրա:

Աբրահամ Մահտեսյան - ֆ.մ.գ. թեկնածու, ավագ գիտաշխատող, ուսումնասիրության հիմնական ուղղությունը՝ Գալակտիկաների կոյտերի ուսումնասիրություն, դրանց

---

ձևաբանական և ֆիզիկական առանձնահատկությունները, օգտագործել գերնորերի մնացորդների վիճակագրությունը տիեզերաբանական որոշ մոդելների թեստավորման նպատակով:

**Սուսաննա Հակոբյան** - ֆ.մ.գ. թեկնածու, ավագ գիտաշխատող, ուսումնասիրության հիմնական ուղղությունը՝ Բյուրականյան երկրորդ շրջահայության ակտիվ գալակտիկաների սպեկտրալուսաչափական ուսումնասիրություն, հատուկ ուշադրության են արժանանում ռադիո և այլ սպեկտրալ տիրույթներում ակտիվություն ցուցաբերող օբեկտների մանրակրկիտ ուսումնասիրությանը:

**Անդրանիկ Սուքիասյան** – մագիստրոս, ավագ լաբորանտ, ուսումնասիրության հիմնական ուղղությունը՝ Մեր Գալակտիկայի և մետագալակտիկայի մագնիսական դաշտի ուսումնասիրություն:



*Արամհան Մահտեսյան, Սուսաննա Հակոբյան, Անդրանիկ Սուքիասյան*

Բաժնին շուտով կմիանա նաև ԵՊՀ ֆիզմաթի մագիստրանտ **Տարթևիկ Մկրտչյանը**:

**2. Ի՞նչ ծրագրերի շուրջ եք այժմ աշխատում: Ինչպիսի՞ միջազգային կամ տեղական համագործակցություններ ունեք:**

Այժմ հիմնականում աշխատում ենք վերոհիշյալ թեմաների ուղղությամբ, համագործակցում ենք աստղադիտարանի այլ բաժինների մի քանի երիտասարդ գիտաշխատողների, Երևանի Կիրառական ֆիզիկայի ինստիտուտի գիտաշխատողների հետ, ինչպես նաև ունենք միջազգային համագործակցություններ շատ երկրների հետ՝ Ֆրանսիա (Մեդոնի աստղադիտարան), Չինաստան (Պեկինի

աստղադիտարան), առանձնապես շատ ակտիվ համագործակցություններ ՌԴ Հատուկ աստղադիտարանի և Մոսկվայի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետի գիտաշխատողների հետ:


**3. Վերջին տարիների գիտական ի՞նչ հայտնագործություններ կառանձնացնեք:**

Վերջին տարիներին մեր բաժնի աշխատակիցների կողմից տպագրվել են բազմաթիվ գիտական հոդվածներ: Ըստ էության յուրաքանչյուր հոդված իր մեջ անպայման պարունակում է մինչ այդ չհայտնաբերված որևէ նորություն կամ նոր գաղափար, որը կարելի է համարել հայտնագործություն: Այդ տեսակետից դժվարանում եմ առանձնացնել որևէ հայտնագործություն, սակայն ուզում եմ հիշատակել մեր կողմից ստացված, բայց դեռ չհրատարակված մի արդյունքի մասին: Գալակտիկաների հարուստ կույտերի կենտրոնական տիրույթներում գտնվող տարածված ռադիոգալակտիկաների ակտիվությունը մեծապես կախված է գալակտիկաների կույտի ձևաբանությունից: Մասնավորապես կարելի է ենթադրել, որ այլ գալակտիկաների խիստ մոտեցումը կենտրոնական գալակտիկային կարող է պատճառ հանդիսանալ ռադիո տիրույթում ակտիվության սկսվելուն կամ վերսկսվելուն: Մեր կողմից հայտնաբերվել են այդ տիպի երևույթների ցայտուն օրինակներ:

**4. Տպագրված կամ դեռ ընթացքի մեջ գտնվող ի՞նչ նշանակալից գիտական հոդվածներ կնշեք:**

Տպագրված հոդվածներից՝ ՌԴ АЖ հանդեսում տպագրված «СТРУКТУРА И ОСОБЕННОСТИ ФОРМИРОВАНИЯ ИНВЕРСИЙ ГАЛАКТИЧЕСКОГО МАГНИТНОГО ПОЛЯ», Р.Р.АНДРЕАСЯН, Е.А.МИХАЙЛОВ, А.Р.АНДРЕАСЯН

Տպագրության է պատրաստվում՝ «БАТАРЕЙНЫЙ МЕХАНИЗМ БИРМАНА И СТРУКТУРА НАЧАЛЬНОГО МАГНИТНОГО ПОЛЯ В ГАЛАКТИКАХ», Р.Р.АНДРЕАСЯН, Е.А.МИХАЙЛОВ:



**5. ԳՀ բաժնի գործունեության այլ կարևոր ցուցանիշներ՝ գիտաժողովների մասնակցություն, զեկուցումներ, սեմինարներ, դրամաշնորհային նախագծեր, մրցանակներ:**

Բաժնի աշխատակիցները գործուն մասնակցություն են ունենում աստղադիտարանում և այլ երկրներում կազմակերպվող գիտաժողովներին և բազմիցս զեկուցումներով հանդես են եկել սեմինարներին ինչպես աստղադիտարանում, այնպես էլ այլ երկրների գիտական հիմնարկներում՝ Ֆրանսիա, Գերմանիա, Անգլիա, Չինաստան, Ռուսաստան և այլն: Այս տարի գիտական նախագիծ ենք ներկայացրել 2021թ. ՀՕՖ-ի ԳԿՀԱՀ (ANSEF) դրամաշնորհին:

**6. Ձեր կարծիքով ինչու՞մ է կայանում աստղագիտության կարևորությունը մարդկության և Հայաստանի զարգացման գործում:**

Աստղագիտությունն այն գիտությունն է, որը մարդկությանը հնարավորություն է տալիս պատկերացում կազմել Տիեզերքի մասին, որում նա ապրում է և որի մի մասնիկն է հանդիսանում: Կարելի է ասել, որ աստղագիտությունը բոլոր այլ գիտությունների լոկոմոտիվն է, որի զարգացման համար առաջացել են մնացած բոլոր բնական գիտությունները: Աստղագիտությունը նույն դերն է կատարել և այժմ էլ կատարում է Հայաստանի գիտության զարգացման գործում:

**7. Ի՞նչ է Ձեզ համար Բյուրականի աստղադիտարանը:**

Բյուրականի Աստղադիտարանն իմ տունն է, որի հետ կապված եմ ավելի քան կես դար՝ 1970-1972թթ.՝ որպես աստղաֆիզիկայի ամբիոնի ուսանող, 1972-1974թթ.՝ զինվորական ծառայություն որպես Սովետական բանակի սպա, 1974թ-ից մինչև այժմ Բյուրականի աստղադիտարանի գիտաշխատող:



48 սմ AZT-14 աստղադիտակ

1980թ-ից հետո համարյա մշտական ապրում եմ աստղադիտարանի բնակելի ավանում,

---

այստեղ են մեծացել և Բյուրականի միջնակարգ դպրոցն ավարտել իմ բոլոր 4  
երեխաները:

*Հարցազրույցը վարեց Մելինե Ասրյանը*